



# Ազդարարության Trumpet's Sound կողմ

49-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018





# Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: pastor@armenianbrethren.org  
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույնեցյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աստվածապաշտությունը՝ օգտակար է ..... Հովիվ՝ Հրաչ Գույնեցյան

Իսկ դու աճո՞ւմ ես ..... Ռեքս Տիրլավ

Տիրոջ ընծալումը տաճարում ..... Դոն Սթորմը

Աննայի եզակի նվերն Աստծուն ..... Քաղված

Հովհաննեսի նամակները (2) ..... QMBC պանորամա

Փո՞ղ, թե՞ Աստված ..... Դոկտ. Չեսլո Բասսարա

Հայթայթող Աստված ..... Քաղված

Ստեղծված ենք Նրա հաճության համար (1) ..... Հովիվ՝ Ռաֆֆի Զափարյան

Քրիստոնեական չափանիշներ ..... Քաղված

Գտնել հավասարակշռությունը ..... Մանկանց ավետ. ընկ.

Եվս մեկ տարի ..... Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

## «Աստվածապաշտությունը՝ օգտակար է ամեն ինչի համար...»:

*Ա Տիմոթեոս 4:8*

**Դ**ոք տարին՝ նոր ուժով: Ո՞չ, դու հեծանիվի կամ արագացող վազք-  
ուղու կարիք չունես... Միզուց նոր Աստվածաշնչի<sup>9</sup>, Աստվածա-  
շնչի սերտողության խմբակի մասնակցելո՞ւ կամ կանոնավոր կեր-  
պով եկեղեցի հաճախելու կարի՞ք ունես:

Աստվածաշունչը հստակ սովորեցնում է, որ պետք է հաղորդակց-  
վենք մյուս հավատացյալների հետ, ոչ միայն սուրճ խմելու համար,  
այլև Աստվածաշունչը սերտելու, ոչ թե եկեղեցու և հովվի մասին խո-  
սելու, այլ Աստծո Խոսքի մեջ ներքափանցելու և միմյանց Քրիստո-  
սով քաջալերելու համար: Ոմանք լավ են սկսում, նույնիսկ ուրիշնե-  
րին քաջալերում են մասնակցել, բայց շուտով նահանջում են և սկսում  
քացակայել: Սա նման է մարզասրահի վարժանքներին մասնակցե-  
լուն և մի քանի շաբաթ անց՝ «այն շատ ծանր է» ասելուն:

Ես սիրում եմ այս համարը. «Աստվածապաշտությունը՝ օգտակար  
է ամեն ինչի համար». Աստծուն պաշտելու, Նրա Խոսքը սերտելու,  
ուրիշների հետ հաղորդակցվելու. ամեն քանի համար օգտակար է:

Եթե ամեն անգամ հաճախենք եկեղեցական ճամբարների, ծրագ-  
րում կինի առավոտյան մենիկ պահի ժամը, որի նպատակը ոչ թե  
մարդկանց օգնելն է, որ չընեն, այլ Տիրոջ հետ առանձնանալն է և  
Նրա մասին խորիրդածելը, աղոքելը և Աստվածաշունչ կարդալը: Օրն  
այդպես սկսելու ի՞նչ գեղեցիկ պահ է: Մենք շատ լավ գիտենք հետև-  
յալ համարը.

«Արքուն մնացեք, հսկեցեք, որովհետև ձեր հակառակորդը՝ սա-  
տանան, մռնչացող առյուծի պես պտտվում ու փնտրում է՝ թե ու՞մ կուլ  
տա» (Ա Պետ. 5:8):

Այո՛, աշխարհը կարող է մեզ շատ բաներով զբաղված պահել:  
Կարդում ենք, որ Հիսուսը միշտ առանձնանում էր Իր աշակերտնե-  
րից՝ Հոր հետ հաղորդակցվելու համար:

Ի՞նչ կասես քո մասին: Ինչպես են ընթանում հոգևոր մարմնավարժություններդ, ե՞րբ ես սկսելու Հայր Աստծո, Որդի Աստծո և Սուրբ Հոգի Աստծո հետ հաղորդակցվելը. ե՞րբ ես նվիրումով որոշելու հաճախել եկեղեցի և մասնակցել Աստվածաշնչի սերտողության խմբակին, հաղորդակցվել մյուս հավատացյալների հետ:

Կյանքը նման է ալիքի. այն կարող է գալ և մի կողմ շպրտել քեզ: Թերևս մի պահ զա, ու ասես, թե շատ մոտ էիր, բայց չիմացար՝ ինչ եղավ: Եթե դու նրանցից ես, ովքեր զգում եմ, որ շատ հեռու են զնացել, կարո՞ղ ես արդյոք տեսնել Նրա լայն բացած սիրող բազուկները, որոնք կանչում են քեզ՝ ասելով.

«Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգմածներ և բեռնավորվածներ, և Ես ձեզ հանգստություն կտամ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և Ինձնից սովորեցեք, որ Ես հեզ եմ ու սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք, որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թերևն» (Սատր. 11:28-30):

Հ. Գ.

## **Իսկ դու աճո՞ւմ ես (2)**

### **2 Պետրոս 1:1-15**

**Ա**ստված աճելու կարողություն է տվել մեզ, բայց արդյոք մենք ու զո՞ւմ ենք աճել: Գոյություն ունի բալանսավորված աճի կարիք: Յուրաքանչյուր առաքինություն պետք է բալանսավորվի՝ դրան ավելացնելով մեկ այլ առաքինություն: Ստորև ներկայացվում է քայլերի շարք կամ բնավորության գծեր:

### **Չարքը բացում է հավատը**

Սա Աստծո զորեղ բազուկների մեջ նետվելու քայլ է ու հավատը առ այն, որ Նա մեզ փրկել է Քրիստոսով. Նա մեզ երբեք չի բողնի: Նա կշարունակի պահել ու աջակցել մեզ ամեն օր:

## **Հավատքիդ բարությո՛ւն ավելացրու**

Սա բարոյական քաջություն է: Լավ ու պատվելի ընկեր ու քաղաքացի լինելու համար Հակոբոսը սովորեցնում է, որ հավատքը առանց բարոյական գործերի նման է անշունչ մարմնի. Պետրոսը նոյնն է ասում: Բայց շուտով կտեսնես, որ լոկ հավատալն ու ճիշտ արարքներ գործելը բավական չեն:

## **Բարությանդ գիտելիք ավելացրու**

Լոկ ճիշտ արարքներ գործելն ու ճիշտ բաների հավատալը բավական չեն, պետք է դրանք հիմնավորել կարողանանք: Երբ մեզ հարցնում են, թե ինչո՞ւ ենք հավատում ինչին հավատում ենք, ու ինչո՞ւ ենք անում այն, ինչ անում ենք, պետք է կարողանանք բացատրել: Սա է մարտահրավերը քրիստոնյաների նոր սերնդին. ոչ միայն փոխանցել իրենց հավատքն ու գործերը, այլև իրենց հավատքի ու գործերի պատճառը բացատրել:

## **Գիտելիքիդ ինքնատիրապետո՛ւմ ավելացրու**

Սա ինքներս մեզ վերահսկելու կարողությունն է: Ինչի՞ համար է դա հարկավոր գիտակ մարդկանց: Ի՞նչ է լինում, երբ իմանում ենք մի բան, որ մեկ ուրիշը չգիտի, կամ այլ կերպ է նայում դրան: Կարող ենք համբերությունից դուրս գալ կամ հպարտանալ: Գիտելիքն առանց խոնարի ու համբերատար ինքնատիրապետման կարող է մեծ վնասներ պատճառել:

## **Ինքնատիրապետմանդ տոկունությո՛ւն ավելացրու**

Նրանք, ովքեր երբեւ նոր վճիռ են կայացրել կամ ուրիշ սմնդակարգի են անցել, կիմանան, թե որքան հեշտ է սկսելը: Խոկական փորձությունը շարունակելն է: Չատերն են դառնում Քրիստոսին: Մեկնարկը հրաշալի է, բայց մեր նպատակը հաղթական ավարտն է:

## **Տոկունությանդ աստվածավախությո՛ւն ավելացրու**

Կարելի է ունենալ հնագանդ հավատք, հիմնավորված գիտելիք, ինքնատիրապետում ու տոկունություն, բայց մի քանի տարի անց այդ ամենը կարող է վերածվել գաղց, ուղղողված ջանքերի: Առանց աստվածավախության, առանց Քրիստոսի հետ անձնական ջերմ փոխհա-

բարերության՝ տեսադաշտից կորցնում ենք ի սկզբանե մեզ խրախու-  
սող տեսիլը:

## **Աստվածավախությանդ եղբայրական բարությո՛ւն ավելացրու**

Որքան մոտ ենք կանգնած Աստծուն, այնքան ավելի հոժարաբար  
ենք սիրով ու բարությամբ ներգրավվում պարզ հարաբերությունների  
մեջ: Ավելի հոժարաբար ենք ներում ու մարդկանց առջև բարձր  
պատմեշներ չենք քաշում, որ ստիպված լինեն վրայով ցատկել,  
նախքան նրանց կընդունենք պարզ բարությամբ:

## **Եղբայրական բարությանդ սե՞ր ավելացրու**

Այս մեկը մեզ հասցնում է հոգևոր աճի նապատակակետին: Տեսա՞ր,  
թե Պետրոսի աճի արահետը մեզ ուր հասցրեց: Մեզ հանգեցրեց՝ խոր-  
իելու աճի բարձրագույն նշանի շորջ: Դա սեր տալու և առնելու կա-  
ռողությունն է: Միմյանց հետ վարվելու ձևը մեր հոգևոր վիճակի ճշ-  
մարիտ փաստարկն է: Մարդկանց հետ իմ փոխհարաբերություննե-  
րում արյոց.

- Անվերապահորեն ընդունում ու սիրո՞ւմ եմ նրանց:
- Պատմե՞ջ, թե՞ կամուրջ եմ զցում:
- Դատո՞ւմ եմ:
- Բժշկաբար ազդեցություն ունենո՞ւմ եմ մարդկանց վիրավոր հո-  
գիների վրա:

Վիրավոր հոգիներ շատ կան: Եզեկիելը հետևյալ սոսկալի խոսքերն  
է գրում Խրայելի կեղծ հովիվներին. «Չուժեղացրիք թույլերին ու չրու-  
ժեցիք հիվանդներին և կոտրվածքը չվիրակապեցիք ու մոլորվածին  
ետ չդարձրիք և կորածին չփնտրեցիք, այլ բռնությամբ ու դաժանու-  
թյամբ նրանց վրա իշխեցիք» (Եզեկ. 34:4):

Եթե մարդու հոգևորապես տկար է կամ վիրավոր, միթե դաժանութ-  
յա՞նք կամ բռնությա՞նք ենք վարվում նրա հետ, թե՞ ուժեղացնում ենք  
ու վիրակապ դնում վերքին: Զրիստոնյաներս երբեմն շատ լավ ենք ու-  
ղիշների սխալները մատնացույց անելուց: Բայց երբ հարցը հասնում  
է բժշկելուն, վերքեր վիրակապելուն ու հոգևոր առողջությունը վերա-  
կանգնելուն, այնքան էլ խելամիտ չենք գտնվում: Եզեկիելն ասում է,

որ Աստծո համայնքներում հոգևորապես տկարները պետք է ուժեղացվեն, իսկ վիրավորները՝ վիրակապվեն, ոչ թե դատվեն: Դատելու կարիք մեր մտածածից շատ ավելի քիչ կա: Պետրոսն ասում է, որ աճելով՝ պետք է գիտակցենք, որ սիրո պակասություն չկա. Աստծո սերն օդի պես է. ինչքան էլ օգտվեմ դրանից, միևնույն է, շատ կա բոլորի համար էլ:

## **Ո՞րն է հոգևոր աճի նպատակը**

Հոգևոր աճը կանխում է Տիրոջը մեր անարդյունավետությունն ու անպտղությունը: Դա անիմաստ կյանքի հակառակն է: Մեր ամեն մի արարքը լի է հավիտենական նշանակությամբ: Իրենց նշանակալի համարող մարդիկ կորողներ ու արձաններ են կառուցում, որպեսզի հիշվեն: Սակայն ի վերջո դրանք փոշու և մոռացության են մատնվելու: Իսկ քրիստոնյայի համար՝ անգամ պարզածդ մի քաժակ սառը ջուրը, որի մասին մոռացել ես, հավիտյան հիշվում է: Կողոսացիների երրորդ գլխում Պողոսը սովորեցնում է, որ ինչ էլ անես Տիրոջ համար, հավիտենական նշանակություն ունի:

Հոգևոր աճը քեզ իրազեկում է ով լինելուդ մասին: Առանց աճի կույր կամ կարճատես ենք դառնում մեր ինքնության հանդեպ: Մեկընդիշտ մաքրագործվում ենք խաչի վրա Քրիստոսի գործով և մշտապես ապրում Աստծո շնորհով:

«Առատ ընդունելության» կարժանանանք: Ի՞նչ է առատ ընդունելությունը: Այս արտահայտությամբ երբեմն նկարագրվում է, թե ինչ էր տեղի ունենում, երբ մարզիկները հայրենի Հունաստան էին վերադառնում օլիմպիական խաղերի մրցույթներից հետո: Երբեմն քանդում էին քաղաքի պարսպի մի մասը առանձնահատող, առատ ընդունելության համար: «Զեզ առատորեն շնորհվելու է Հավիտենական Թագավորության մեջ մտնելը» (հմք 11): Այն, որ կարող ենք Աստծո երջանկության մասնիկը լինել, մեզ համար անհասկանալի փառք է, քայլ հենց այդ է առատ ընդունելությունը:

Երկու անձանց միջև բարեկամության էությունն այն է, որ յուրաքանչյուրը ուրախություն պատճառի մյուսին: Այդպես է մեր ու Աստծո միջև: Անել նշանակում է՝ քացահայտել, թե ինչ է նշանակում ուրախանալ Աստծով և ուրախացնել Աստծոն:

## **Տիրոջ ընծայումը տաճարում**

**Ղուկաս 2:21-40**

 ովսեփն ու Մարիամը Օրենքի ծեսերին հետևեցին: Մանուկ Հիսուսը թլպատվեց, իսկ Մարիամի մաքրվելու օրերը լրանալուց հետո Հիսուսին տարան տաճար ու Տիրոջը ընծայեցին:

Ի տարբերություն Հովհաննեսի թլպատման մասին տեղեկությունների՝ այստեղ Ղուկասը միայն տեղեկացնում է, որ Նրան անվանեցին այնպես, ինչպես հրեշտակն էր ասել: Ենթադրում ենք, որ դա տեղի ունեցավ Քերդեհեմում. Նազարեթ վերադառնալը, ապա մի քանի շաբաթ անց տաճարում մաքրման ծեսերի համար Հրեաստան գալը դյուրին չէր լինի:

Ղուկասը կրկին ուշադրություն է հրավիրում այն մարդկանց վրա, ովքեր բժախսնդրուեն հետևում էին Օրենքին: Նույնը նշվել էր նաև Զաքարիայի ու Եղիսաբեթի մասին: Նույն զգուշավորությամբ Օրենքին հետևում են Հովսեփն ու Մարիամը: 23-րդ համարն ասում է, թե մասնավորապես որ պատվիրանին էին հետևում: Ինչևել, գրեթե պատահմամբ, Ղուկասն ասում է, որ Հովսեփն ու Մարիամն աղքատ էին: Նրանք բանկարժեք ընծաներ չէին բերել, որ կրերեին հարուստները: Փոխարենը՝ բերել էին մի զույգ տատրակ: Այստեղ կրկին հասկանում ենք Տիրոջ ընդունած չքավորության աստիճանը:

### **Սիմոն և Աննա**

Ղուկասն ավելի շատ պատմում է տաճար եկած Սիմոնի և Աննայի մասին, քան մաքրման ծեսերի: Սիմոնի մարգարեությունը Մարիամին՝ Վերջինս երբեք չէր մոռանալու:

Սիմոնն աստվածավախ ու արդար մարդ էր, որ սպասում էր Խոհայելի միսիթարությանը: Դա լինելու էր ոչ թե իրադարձություն, այլ անձ՝ Աստծո Օջալը: Սուրբ Հոգին Սիմոնին հայտնել էր, որ չի մեռնի առանց Սեսիային տեսնելու: Սուրբ Հոգին նրան տաճար բերեց հենց այն պահին, երբ Հովսեփն ու Մարիամը գալիս էին Օրենքը կատարելու:

Սիմոնի փառաբանությունն ու մարգարեությունը ցույց են տալիս, որ նա Աստծուն շատ մոտ էր: Նա մանկամը գիրկն առավ և փառաբանեց Աստծուն Իր խոսքը կատարելու համար: Հիմա կարող էր խաղաղությամբ հեռանալ այս կյանքից: Նա տեսել էր Տիրոջ Փրկությունը, որ Աստված պատրաստել էր ամենքի համար: Սիմոնին քաջ հայտնի էր, որ երբ Սեսիան գար, օրինություն ու փրկություն էր բերելու ոչ միայն Խրայել ազգին, այլև ողջ մարդկությանը: Եսային (42:6) Տիրոջ Ծառայի մասին խոսել էր որպես մեկի, ով լույս էր բերելու հեթանոսներին: Սիմոնն այս ճշմարտությունը հասկացել էր՝ ճանաչելով, որ նույն անձը հայտնության լույսն էր բերելու հեթանոսներին և փառք՝ Խրայելի ժողովրդին:

Հովսեփին ու Մարիամը Սիմոնի խոսքերից զարմանքից քար էին կտրել: Թվում է, թե նրանցից որոշ ժամանակ պահանջվեց ամիսներ առաջ հրեշտակի բերած պատգամը հասկանալու համար: Հովսեփին ասվել էր, որ մասնութեան Սուրբ Հոգուց էր բեղմնավորվել, և Իր ժողովրդին փրկելու էր իրենց մեղքերից: Մարիամին ասվել էր, որ իր որդին, ով նաև Բարձրյալի Որդի էր կոչվում, ժառանգելու էր Իր հոր՝ Դավթի զար, և Նրա թագավորությանը վերջ չէր լինելու: Խսկ հիմա իմացան, որ օրինությունը շատ ավելի հեռուն է գնալու, և այդ Մանկան շնորհիվ հեթանոսներն ել են օրինվելու:

Սիմոնն օրինեց Հովսեփին ու Մարիամին և նրանց ավելին իմացեց իր գրկում պահած մանկան մասին: Մանուկն Խրայելում շատեղի անկման ու բարձրացման պատճառ էր լինելու: Այս առեղծվածային նախադասությունը պետք է կապել Մատթ. 21:42-44-ում Տիրոջ մեջքերման հետ: Տերն Իր ունկնդիրներին հիշեցնում էր, որ այն քարը, որ շինողներն անարգեցին, անկյան գլուխ եղավ: Նաև ավելացրեց՝ ով ընկնի այդ քարի վրա, կփշրվի, և ում վրա այն ընկնի, փոշու կվերածի նրան:

Խրայելում շատերն են մերժում Տեր Հիսուսի Սեսիա լինելը: Նրանք սայթաբում ու վայր են ընկնում խաչյալ Սեսիայի գայթակղության քարի վրա: Ընկնելով՝ փշրվում են: Սիաթամանակ շատերը կհավատան: Հավատացողները կբարձրանան՝ աստերի պես երկնքում շողալու: Տեր Հիսուսը նաև նշան կլինի, որին կհակառակվեն: Տերը բա-

զում նշաններով ցույց տվեց Աստծո Օծյալը լինելու փաստը, բայց Նրան հակառակողները Նրան անվանեցին որպես Բեհեղեկրութի հետ համագործակցող: Ինչևէ, այս կերպ շատերի սրտերը կբացահայտվեն: Մարդու խսկական մտքերը երևում են Աստծո Որդու հանդեպ նրա վերաբերմունքի մեջ:

Սիմոնն առանձնահատուկ ուղերձ հղեց Մարիամին: Թուրք խոցելու էր նրա հոգին: Մարիամի սիրտը ցավով մղկտալու էր՝ Տեր Հիսուսին խաչի վրա տեսնելով: Նրա մայրական սիրտը կսկիծով մորմոքալու էր:

Տաճարում գտնվող մեկ այլ աստվածավախ անձ՝ Աննան, խոսեց մանկան մեծության մասին: Աննան մարգարեուիի էր, որ ժամանակի մեծ մասն անցկացնում էր տաճարում՝ ծոմով ու աղոքքով Աստծուն ծառայելով: Նա երկար տարիներ այրի էր, և ամուսնու հետ ընդամենը յոթ տարի էր ապրել: Նա Աստծուն փառաբանեց Մանկան համար՝ հավաստելով, որ Նրանով փրկություն կգա: Աննայի՝ մշտապես տաճարում գտնվելը նրան առանձնացնում է՝ որպես Աստծուն նվիրված կիմ՝ երկրպագող, ծոմ պահող և աղոքող: Նա իր պատմությունը պատմում էր նրանց, ովքեր Երուսաղեմի փրկությունն էին փնտրում, ինչպես ինքը:

## **Մեզ համար այսօր**

Տիրոջը նվիրված սրտեր ունենում են Սիմոնի ու Աննայի պես մարդիկ, ովքեր Աստծո հետ ժամանակ են անցկացնում: Նրանք սովորել են երկրպագության ուղին: Նրանց երկրպագության Աստվածը նույնն է այսօր, ում առջև պետք է խոնարհվենք պաշտամունքով՝ ընդունելով, որ Նա եկավ՝ մեզ համար մեռնելու: Լոկ Նրանում կարող ենք փրկություն ու մեր հոգիներին հանգստություն գտնել:

Դռն Սթորմը



## ԱՆՆԱՅԻ ԵՂԱԿԻ ՆՎԵՐՆ ԱՍՏԾՈՒՆ

**Ի** սրայելում դատավորների շրջանի անիշխանական և շփոթության օրերի բույլ հոգեվիճակի ժամանակ ամեն մարդ իր աչքին հաճելի երևացողն էր անում, և անտարբերությունն Աստծո հանդեպ բույն էր դրել նաև Հեղի քահանայապետի տանը: Մեղքն ապականել էր ու քայքայել էր սուրբ կոչումով կանչված Հեղի որդիներին, Աստծո և մարդկանց միջև հեռավորությունը մոտեցնող քահանայապետական կամուրջը փլվելու եղին էր: Բարկության բաժակը լցված էր և թափվելուն մոտ: Հեղի որդիներն իրենց առանձնաշնորհումը և պատիվը ոտնակոխ էին արել:

Նրանք ապրում էին սանձարձակ, իրենց մոլություններին և կրթերին գերի: Այլևս չէին կարող Աստծո պատգամները փոխանցել ժողովրդին, զգուշացնել և առաջնորդել: Իրենց դիրքն ու սուրբ պաշտոնը հավետ կորցնելու եղին էին: Աստված որոշել էր Իր ուխտը վերցնել և նրանց ու նրանց սերունդը պաշտոնազուրկ անել և անեծքով հարվածել:

Ուրեմն ո՞վ էր կանգնելու Աստծո առջև լսող ականջով, խոնարհ սրտով և հնազանդ հոգով: Ո՞վ էր հայտարարելու Նրա խոսքերը, իրատներն ու ազդարարությունները ժողովրդին: Աստված վիստում էր մեկին, որ պարսպի վրա կամ իրամատում արթուն կանգներ ու հսկեր: Մեկը, որ Իր սրտին մոտ լիներ և Իր տաճարից չքածանվեր:

Օրերը ճգնաժամային էին: Նա տակավին փնտրում էր մեկին...

Այն տիսուր իրականության դիմաց Թագավորների առաջին գրքի էջերը բացվում են բարեպաշտ և աստվածավախ մի մարդու ներկայացմանը, որ ամեն տարի իր ընտանիքով ներկայանում էր Տիրոց առջև՝ երկրագելու և զոհ մատուցելու:

Այս մարդու կանանցից մեկը՝ Աննան, ամուլ էր, ինչի համար նախատվում էր ու տառապում: Մինչև ե՞րբ էր սրտի վրա կրելու այս դառն ու ճնշող վիշտը, մինչև ե՞րբ էր լսելու ու համբերելու:

Վճռական որոշում կայացրեց. անգամ իր տուն չէր դառնալու, Տիրոջ տնից չէր հեռանալու, մինչև որ իր ծանրաբեռնված սիրտը Նրան չբացեր ու չպատմեր, մինչև շխնդրեր, չաղաչեր մի արու զավակ ունենալու համար, նրան՝ Տվողին վերադարձնելու պայմանով:

Աստված շմերժեց այս խնդրանքն ու ընծան և այնտեղ պատասխանեց, ուստի տրտում Աննան ուրախ վերադարձավ, ու երեսն այլս չտրտմեց:

Աննան կարող էր միայն խնդրել, ունենալ և վայելել: Այդ օրերին արու զավակը կարևոր էր ժառանգությունը և ազգարանության գիծը պահելու համար, բայց նա համաձայնեց Աստծո նվերը՝ ավելի արժեվորված, կրկնակի նվեր եղած, Նրան նվիրել:

Աստված գտավ Իր փնտրած անձին և պատրաստեց ապագայի Սամուել մարգարեթին:

Մարմնով՝ տկար ու անարգված, բայց հավատքով՝ զորավոր, նվիրումով՝ հոժարակամ Աննան, մի որդու մայր եղավ, ով հաճելի էր Տիրոջը ու մարդկանց, մեծ մարգարե, ով կատարեց Աստծո կամքը:

Աննայի խոստման և հոժարության արդյունքը ոչ միայն մարմնավոր, այլև հոգեկան կորող եղավ, նրա ուրախության և շնորհակալության աղորքը Աստված Իր սուրբ Խոսքում արձանագրեց: Սուրբ Գրքում հազվագյուտ են այն կանայք, որոնց աղորքները հիշված են ու մինչև մեզ են հասել: Աննային նույնպես տրվեց այս պատիվը: Գոհությամբ և մարգարեական շնչով արտասանված այս աղորքը, վստահ եմ, որ դարեր ի վեր շատերի օրինությունը, քաջալերությունը և միսիթարությունն է եղել. Տերը Աննայի վրա հաստատեց Իր Խոսքը. «Ես փառավորելու եմ Ինձ փառավորողները, իսկ Ինձ արհամարհողները պիտի անարգվեն»:

Քաղված՝ «Մարանաթա» ամսագրից



## Հովհաննեսի նամակները (2)

**Ե**րկու նախազգուշացում է ներկայացված. առաջինը՝ աշխարհը, այսինքն՝ աշխարհի համակարգը, որը ստեղծվել է մարդու կողմից, առանց Աստծո կամ Քրիստոսի, իսկ երկրորդը՝ հակաքրիստոսները՝ աղանդմերի կամ աղանդավորական շարժումների առաջնորդները: Այս նախազգուշացումները, հավանաբար, տրվել են Հովհաննեսի օրերում քրիստոնյաներին գնոստիկների ուսմունքներից և գործերից պաշտպանելու համար, սակայն նախազգուշացումները հստակորեն կիրառելի են նաև մեր օրերում:

Հովհաննեսն ասում է. «Եթե մեկը սիրում է աշխարհը (աշխարհի համակարգը), Հոր սերը նրա մեջ չէ»: Այս աշխարհային համակարգում ամեն ինչ կարելի է բնութագրել որպես մարմնականի ցանկություն, աչքերի ցանկություն և կյանքի հպարտություն: «Աշխարհն էլ կանցնի, նրա ցանկությունն էլ, բայց նա, ով կատարում է Աստծո կամքը, հավիտյան կմնա» (Ա Հովհ. 2:17): Մենք նկատում ենք, որ այստեղ թվարկված երեք բնութագրերը Եվային դրդեցին Եղեմի պարտեզում արգելված պսդից օգտվելու: «Եվ երբ կինը տեսավ, որ ծառը լավն էր որպես ուտելիք և թե հաճելի էր աչքերին, և ծառը ցանկալի է իմաստուն դարձնելու համար, առավ նա պսդից ու կերավ...» (Ծննդ. 3:6):

### 2.3 ՏԱՐԲԵՐԱԿԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԹՅՈՒՆԻՑ (2:18-29)

Հովհաննեսի հասցեատերերն արդեն գիտեին, որ հակաքրիստոսը գալիս է (հմտ. 2 Թես. 2:3-4): Սակայն նա մատնանշում է, որ իրենց համայնքում արդեն շատ հակաքրիստոսներ կամ՝ շար ուսուցիչներ, որոնք մերժում էին առաքյալներին և նրանց ուսմունքը, ուրանում, որ Հիսուսը Քրիստոսն է: Նրանցից ոմանք նոյնիսկ տեղական եկեղեցիների անդամ էին: Այդուհանդերձ, Հովհաննեսը նրանց մասին ասում է. «Ոմանք մեր միջից ելան, բայց մեզնից չին, քանի որ, եթե մեզնից լինեին, կմնային մեզ հետ. բայց մեզնից ելան...» (Ա Հովհ. 2:19):

Հետո Հովհաննեսը քրիստոնյաներին հիշեցնում է, թե ինչպես կա-

իոդ են տարբերակել ճշմարիտ և կեղծ ուսմունքները: Երբ նրանք առաջին անգամ հավատացին, օծվեցին Սուրբ Հոգու կողմից, և Նա ուղղեց նրանց դեպի ճշմարտությունը (Հովհ. 16:13): Այսպիսով, Հովհաննեսը կարող էր գրել. «Զեզ գրեցի ոչ այն պատճառով, որ դուք ճշմարտությունը զգիտեք, այլ որովհետև գիտեք այն...» (Ա Հովհ. 2:20-21): Հովհաննեսը հայտարարում էր, որ գնոստիկները ստախոսներ են, քանի որ ուրացան, որ Հիսուսը Քրիստոսն է, և այդպես անելով՝ նրանք ուրացան և՛ Հորը, և՛ Որդուն: Հիշե՛ք, որ Հիսուսն ասաց. «Ես և Հայրը մեկ ենք» (Հովհ. 10:30): Նաև ասաց. «Մեկը Հորը չի գա, բացի Ինձանով» և «Նա, որ Ինձ տեսավ, Հորը տեսավ» (Հովհ. 14:6, 9): Այսպիսով, Տեր Հիսուսը միակ ճանապարհն է դեպի Հայրը, և Նա նաև Հոր հայտնությունն է: Ուստի, այդ ստախոսները, որոնց մասին Հովհաննեսը գրում է, հավիտենական կյանք չունեին:

Կարևոր էր այն, որ քրիստոնյաներն իրենց սրտերում պահեին այն ամենը, ինչ լսել էին սկզբից, և չտարվեին կեղծ ուսմունքներով: Նրանք պետք է մնային (բնակվեին) Քրիստոսում և պատրաստ լինեին Նրա գալուստին: Քրիստոսի մեջ մնալու արդյունքը քրիստոնեական կյանքում արդարություն գործելն է (Ա Հովհ. 2:27-29):

## 2.4 ՍԵՐՈ ՄԵԶ ՔԱՅԼԵԼ (3:1-24)

Հովհաննեսն Աստծո ժողովրդին դիմելիս արդեն օգտագործել էր «որդյակներ» արտահայտությունը, բայց այժմ նա մեծարում էր Աստծուն, մինչ զիտակցում էր Հոր սիրո մեծությունը, որ մեզ «Աստծո զավակներ» է դարձնում: Եվ այնպես, ինչպես աշխարհը ճանաչեց Տեր Հիսուսին, նույնպես էլ մեզ չի ճանաչում (Հովհ. 1:10-11, Ա Հովհ. 3:1): Նրանք, ովքեր իսկապես Աստծո զավակներն են, կարող են վստահորեն ակնկալել Տիրոց հայտնվելը: Այդ ժամանակ նրանք Նրա նման կլիմեն՝ տեսնելով Նրան այնպիսին, ինչպիսին Նա կա: Նրան տեսնելու այս հույսը մաքրելու ազդեցություն ունի Աստծո զավակների վրա:

Առաջյալն ասում է, որ նա, ով սովորության համաձյան մեղք է գործում, անհավատ է, այսինքն՝ նա Քրիստոսի մեջ չէ և չի տեսել կամ չի ճանաչում Նրան: Նման մարդն իր կամքը ավելի բարձր է դասում, քան Աստծո կամքը. նա անօրեն մարդ է: Մենք՝ քրիստոնյաներս, գի-

տեսք, որ Տեր Հիսուսը հայտնվել է մեր մեղքերը վերցնելու համար, և Նրա մեջ մեղք չկա (Ա Հովհ. 3:5):

Որպեսզի քրիստոնյաները մոլորության մեջ չընկնեն, Հովհաննեար հստակորեն ասում է. «Նա, ով արդարություն է գործում, արդար է, ինչպես Նա է արդար...Նա, ով մեղք է գործում, սատանայից է» (Ա Հովհ. 3:7-8): Եվ այսպես, մենք կարող ենք տարրերել Աստծո որդիներին և սատանայի որդիներին. «Սրանով են հայտնի դառնում Աստծո որդիները և սատանայի որդիները: Նա, ով արդարություն չի գործում, Աստծուց չէ, և ո՛չ էլ նա, ով իր եղբորը չի սիրում» (Ա Հովհ. 3:10):

Պետք է նշել, որ Հովհաննեար չի ասում, որ քրիստոնյան ընդհանուրապես մեղք չի գործում, այլ այն, որ նա սովորաբար մեղք չի գործում, ինչպես անում էր մինչև իր փրկվելը: Քրիստոնեական կյանքն այլևս չի բնութագրվում մեղքի գործերով, այլ արդարության գործերով: Սակայն քրիստոնյան երբեմն կարող է ընկնել մեղքի մեջ. դա հաստատվում է Ա Հովհ. 1:8-ում և 2:1-ում:

Հովհաննեար վերադառնում է սիրո թեմային, որը ներկայացրել էր Ա Հովհ. 2:7-11-ում: «Պետք է սիրենք միմյանց» և «Մենք գիտենք, որ մահվանից դեպի կյանք փոխադրվեցինք, որովհետև սիրում ենք եղբայրներին»: «Սրանով մենք իմացանք սերը, որ Նա Իր կյանքը տվեց մեզ համար. մենք էլ պետք է մեր կյանքը տանք մեր եղբայրների համար» (Ա Հովհ. 3:11, 14, 16): Այսուղեւ Կայենի օրինակը բերված է որպես եղբորը ատելու օրինակ (Ա Հովհ. 3:12): Նրանք, ովքեր ատում են իրենց եղբայրներին, նկարագրված են որպես մահվան մեջ մնացողներ և մարդասպաններ (Ա Հովհ. 3:14-15): «Եվ աս՝ է Նրա պատվիրանը, որ հավատանք Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի անվանը ու սիրենք միմյանց, ինչպես որ մեզ պատվիրեց» (Ա Հովհ. 3:23): Այս սերը ոչ միայն պասիվ է, այլև գործնական: Գործնական սիրո օրինակ է նյութական ունեցվածքը կարիքավորների հետ կիսելը (Ա Հովհ. 3:17-18):

Սեր աղոքների պատասխանը ստանալու գաղտնիքը տրվում է Ա Հովհ. 3:21-22-ում: Մինչ ավելին ենք իմանում Աստծո կամքի մասին և թույլ ենք տալիս, որ մեր կամքը դառնա Նրա կամքը, խնդրենք ըստ Աստծո կամքի, որ ստանանք այն ամենը, ինչ խնդրել ենք Նրանից:

Տիրոջ պատվիրաններին հնազանդվողները ապրում են Նրա մեջ, և Նա նրանց մեջ է. մենք սա զիտենք Աստծո Հոգու միջոցով, որը տրված է մեզ (Ա Հովհ. 3:24):

## 2.5 ՃԱՆԱՉԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՂԾԻՔԸ (4:1-6)

Հովհաննեսի օրերի քրիստոնյաները պետք է ստուգեին, թե արդյոք այդ ուսուցիչներից (այսպես կոչված) լսած ուսմունքները Աստծո Հոգո՞ւց էին, թե՝<sup>9</sup> հակաքրիստոսի ոգուց: Կարևոր փորձաքարն այն էր, թե արդյոք այդ ուսուցիչները ընդունո՞ւմ էին, որ Հիսոս Քրիստոսը եկել է մարմնով: Սա եղել է և կա հիմնարար ճշմարտությունը: Ճշմարդիտ ուսուցիչները զիտակցում են, որ Նա, ով հավասար էր Աստծուն, մարդկության փրկագննան համար մարդկային մարմին հազար (Ա Հովհ. 4:1-3):

Աստծո Հոգու միջոցով, որը բնակվում է նրանց մեջ, Աստծո զավակները հաղթահարում են հակաքրիստոսի ոգուն. «Նա, որ ձեր մեջ է, ավելի մեծ է, քան նա, որ աշխարհի մեջ է» (Ա Հովհ. 4:4): Սուտ ուսուցիչները պատկանում են աշխարհին և իրենց բնավորությունը վերցնում են աշխարհից, և աշխարհը լսում է նրանց: Ճշմարդիտ առաքյալների մասին խոսելով՝ Հովհաննեսը կարող էր կստահորեն գրել. «Մենք Աստծուց ենք: Նա, ով ճանաչում է Աստծուն, մեզ է լսում. նա, ով Աստծուց չէ, չի լսում մեզ: Այսպիսով ենք ճանաչում ճշմարտության Հոգին և խաբեության հոգին» (Ա Հովհ. 4:6): Այսօր քրիստոնյաները ոչ միայն Աստծո Հոգին ունեն առաջնորդության համար, այլև Աստծո ամբողջական Խոսքը, որի միջոցով կարող ենք տարբերել ճշմարտությունն ու կեղծիքը:

(Շարունակելի)

Translated from QMBC Panorama of the Bible Course with permission. QMBC Inc.

Թարգմանված է QMBC Աստվածաշնի պանորամա դասընթացի թույլտվությամբ:  
QMBC Inc.



## **Փո՞ղ, թե՞ Աստված**

**Մարկ. 10:17-22**

### **Փողին հետամուս**

Նախկին հասարակություններում, եթե մարդը աշխատավարձ չուներ, նա բառացիորեն ենթակա էր քաղցի ու մահվան: Գումար հայթայթումը նրան ազատում էր մահվան ու քաղցի վախից: Հետագայում փողը փոխարինեց հազուստին ու սննդի պաշարին: Շուտով նրանք, ովքեր ավելի շատ փող ունեին, մոռացան այն պատճառը, որ գերակայում էր: Փողն ինքնին դարձավ նպատակ, կարգավիճակի խորհրդանիշ և հաջողության չափորոշիչ:

Որոշ հարուստներ հակված են իրենց վեր դասել նրանցից, ովքեր քիչ փող ունեն կամ չունեն: Նրանք վայելում են ճոխ կյանքը, որ ուղիներին հասանելի չեն: Նրանց ահռելի իշխանություն է արվում, և կարծում են, թե կարող են իրենց փողն օգտագործել ուրիշներին իշխելու համար: «Արծարքսիրությունն» ի վերջո դառնում է կռապաշտություն: Ուստի Պողոս առաքյալն ասում էր. «Որովհետև դրամի սերը բոլոր չարիքների արմատն է» (Ա Տիմ. 6:10ա):

### **Տեր Հիսուսը փողի մասին շատ էր խոսում:**

Փողի վերաբերյալ կարևոր է երեք հարցադրում. 1. Ինչպե՞ս եմ դա վաստակում (օրինական ու ազնի՞վ ճանապարհով): 2. Ի՞նչ եմ անում դրանով (գնում ոչ անիրամեշտ ճնշություննե՞ր, թե՞ օգնում կարիքավորներին): 3. Դա ինձ ի՞նչ է անում:

Տեր Հիսուսի առակներից մի քանիսը վերջին հարցի թիրախին են դիացում: Նրա պատմած 38 առակներից 16-ը վերաբերում էին փողին կամ ունեցվածքին: Լուծում պահանջող բոլոր խնդիրների շարքում Նրա առակների գրեթե կեսը վերաբերում են փողի կամ ունեցվածքի հարցերին:

### **Փողի սխալ օգտագործում**

Որքանո՞վ է ճիշտ, որ գումարը ծախսում ենք՝ զնելու համար բաներ,

որ մեզ հարկավոր չեն, որպեսզի տպավորություն գործենք այն մարդկանց վրա, ովքեր մեզ դուր չեն գալիս: Խնդիրն այն չէ, որ փողն ինքնին վատ բան է: Իրական խնդիրը լոկ այն է, որ փողը Աստծուն փոխարինելու հակում ունի:

### **Ո՞րն է խնդիրը:**

Մարկոս 10:17-22-ում կարդում ենք մի երիտասարդի մասին, ով կարծես Աստծուն էր փափագում: Նրան հրաշալի հնարավորություն է տրվում Տեր Հիսուսի հետ լինելու և Նրանից սովորելու: Ինչևէ, նա վրդովված հեռացավ, որովհետև չէր կարող հրաժարվել ողջ ունեցածից: Խնդիրն այն չէր, որ նրա փողերը վատ բան էին: Խնդիրը լոկ այն էր, որ նրա փողերը ստրկացրել էին նրան:

### **Այսօրվա ողբերգությունը**

Իրական ողբերգությունն այսօր այն է, որ շատ-շատերը փողին են հետամուտ: Նրանք ճգոտում են դրան, որովհետև երբեք չեն գիտակցել, որ նի շատ ավելի կարևոր բան կա: Ապրուսի հայթայթման մեր վազքի ժամանակ շատ հաճախ մոռանում ենք կյանք ձևավորել: Փողին հետամուտ մեր վազքի ժամանակ մոռանում ենք տեսնել երկրի վրա մեր ժամանակի ավելի վեհ նպատակը:

**Ո՞րն է փողի հետ կապված իմ նպատակը:**

Փողն օգտագործում եմ ապրելու համար, թե՝ ապրում եմ փողի համար:

Դոկտ. Չեսլով Բասսարա

## **Հայթայթող Աստված**

**Պ**ալասի աստվածաբանական ճեմարանի բացումից կարճ ժամանակ անց՝ 1924թ.-ին, նյութական անբավարարության պատճառով այն գրեթե սնանկության եզրին հասավ: Մի օր կեսօրվա ժամը 12-ին բոլոր պարտատերերը պատրաստ էին ճեմարանը գրավելու: Նույն պահին ուսումնարանի հիմնադիրները հավաքվեցին տնօրենի

գրասենյակում՝ աղոթելու, որ Աստված հայթայի իրենց կարիքը: Այս աղոթաժողովին ներկա էր Հերի Այրընայտք: Երբ եկավ նրա՝ աղոթելու հերթը, նա իր կենսունակ անկեղծ ոճով ասաց. «Տե՛ր, զիտենք, որ հազարավոր լեռների անասունները քոնն են: Խնդրում ենք, որ դրանցից մի քանիսը ծախես և դրամը մեզ ուղարկես»:

Ճիշտ նույն ժամին մի տեխասցի վաճառական աստվածաբանականի գրասենյակ մտավ, յուրահասոուկ բարբառով բարևեց քարտուղարուին և ասաց.

- Երկու բեռնատար լի արջառ ծախեցի: Զանացի առևտրային գործ հիմնել, բայց ձախողվեցի: Զգում եմ, որ Աստված ուզում է՝ այս գումարն աստվածաբանական ճեմարանին նվիրեմ: Զգիտեմ՝ նյութական կարիք ունե՞ք, թե ոչ, բայց ահա կտրոնը:

Այս ասելով՝ նա գումարը հանձնեց զարմացած պաշտոնյային: Քարտուղարուիին կտրոնը վերցրեց և զիտակցելով հարցի ճգնաժամային բնույթը՝ զնաց աղոթաժողովի սենյակ և կամաց զարկեց դուռը: Ուսումնարանի տնօրենը, ով հիմնադիրն էր, դուռը բացեց և կտրոնը վերցրեց կնոյ ձեռքից: Երբ գումարին նայեց, տեսավ, որ նշված գումարը համապատասխանում էր իրենց պարտքի չափին: Ապա անունին նայելով՝ ճանաչեց արջառների մեծ վաճառականին: Ուստի դառնալով պյուն Այրընայտին՝ ասաց.

- Հերի, Աստված արջառները ծախել է:

Այո՛, Տերն ասում է. «Զանի որ Իմն են անտառի բոլոր զազանները, հազարավոր լեռների նախիրները: Ես զիտեմ լեռների բոլոր բռչուններին, ու դաշտի վայրի գազաններն Իմ առջև են: Եթե սովածանամ, քեզ չեմ ասելու, քանի որ աշխարհն ու նրա լիությունն Իմն են: Սի՞թե Ես ցլի միս եմ ուսում կամ նոխազների արյուն եմ խմում: Օրինության պատարագ մատուցիր Աստծուն, և կատարի՛ր քո ուխտերը Բարձրյալին ու նեղության օրը կանչի՛ր Ինձ. Ես քեզ կազատեմ, ու դու կփառաբանես Ինձ (Սաղ. 50:10-15):

Քաղված՝ Ոիթարամ Դավիթյանի  
«Բարեպատուղ ձիթենին» գրքից

## **Ստեղծված ենք Նրա հաճության համար (1)**

**Ծննդոց 1:1**

**Պ**ահանջ ասում են, որ այս համարը Աստվածաշնչի ամենաշատ կարդացված համարն է: Չնայած կարող ենք մտածել, որ Հովի 3:16-ն է ամենաշատ կարդացվածը, սակայն ունանք ասում են, թե եթք մարդիկ որոշում են Աստվածաշունչ կարդալ, սկսում են Ծննդ. 1:1-ից, թեկուզ և չեն ավարտում ամբողջ Աստվածաշնչի ընթերցումը:

Բայց և այնպես այս համարը մեծ նշանակություն ունի, եթե պարզապես կարողանանք հասկանալ դրա ամբողջ իմաստն ու ճշմարտությունը: Աստվածաշնչի մնացած մասը հենքում է այս համարի վրա: Իրականում այն կառուցված է Աստծո մասին մեզ մանրամասներ հաղորդելու վրա և օգնելու՝ ավելի լավ հասկանալու Աստծուն՝ որպես Արարչի, նախախնամողի, պահպանողի, Փրկչի և մեր Հոր:

Ուշադրություն դարձրեք. Աստվածաշուն ասում է, որ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Նախքան Աստծո երկինքն ու երկիր ստեղծելը, ոչինչ գոյություն չուներ՝ բացի Իրենից: Աշխարհում և տիեզերքում ամեն բան՝ տեսանելի և անտեսանելի, գոյություն ունեն միայն այն պատճառով, որ Աստված ստեղծեց դրանք (Կող. 1:16, Հովի. 1:3, Եսայի 45:12):

Կարևոր է իմանալ, թե ինչու Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, այդ բվում՝ մեզ: Աստվածաշուն ասում է, որ Աստված բոլոր բաները ստեղծեց Իր հաճության համար: Այլ կերպ ասած, Աստված բոլոր բաները ստեղծել է Իր վայելքի համար (Հայտ. 4:11):

Մենք գիտենք, որ Աստծուն հաճելի է Իր ստեղծագործությունը՝ բնուրյունը, քանի որ այն հայտարարում է Աստծո փառքը (Սաղ. 19, Ծննդ. 1:4, 12, 18, 21, 25, Սաղ. 104, Սաղ. 104:31):

Սակայն ի՞նչ ասենք մեր մասին: Արդյոք հաճելի՝ ենք Աստծուն: Եթե Աստված է մեզ ստեղծողը, և այդպես էլ կա, և եթե մեզ ստեղծեց Իր հաճության համար, ապա ինքներս մեզ պետք է հարց տանք, թե արդյո՞ք հաճելի ենք Աստծուն:

Ինչպե՞ս կարող ենք հաճելի լինել Աստծուն: Նախևառաջ պետք է կառուցենք հիմքը և ամրացնենք մեր մեջ այն համոզմունքը, որ Աստված է ստեղծել մեզ (Ծննդ. 1:26, 1:27, 2:18, Կոդ. 1:16):

Աստված հենց այնպես չի ստեղծել մեզ, այլ նպատակի համար՝ Իր հաճության, փառքի և պատվի համար (Եսայի 43:7, 43:21, Սաղմոս 149:4):

Հետևաբար հաջորդ հարցը, որ ինքներս մեզ պետք է տանք, սա է. «Ինչպե՞ս կարող եմ հաճեցնել Աստծուն» (Հայտ. 4:11):

Առաջին՝ Աստված փափառում է, որ մենք հաղորդակցվենք Իր հետ: Ստեղծագործության սկզբից ի վեր Աստված ուրախանում էր մարդկանց հետ հաղորդակցվելով: Նա դա արեց Ադամի և Եվայի (Ծննդ. 3:8-9), Ենուկի հետ (Ծննդ. 5:22): Արրահամք կոչվեց Աստծո բարեկամ (Հակ. 2:23): Ուշադրություն դարձրեք. Աստվածաշունչն ասում է, որ Արրահամք հավատաց Աստծուն, և միայն այն ժամանակ կոչվեց Աստծո բարեկամ:

Երկրորդ՝ Աստծուն հաճելի է Իր զավակներին խաղաղության և միաբանության մեջ տեսնելը (Փիլ. 2:2, Սաղ. 133:1, Հռոմ. 12:16, Եփես. 4:3): Աստծուն հաճելի է, եթե մենք խաղաղության մեջ ենք միմյանց հետ և միասնական: Աստված ուզում է, որ ոչ թե փոքր բաների մասին անընդհատ վիճենք, այլ միմյանց ներելով՝ միասին աշխատենք ընդհանուր գործի՝ Աստծո Թագավորությունը տարածելու համար:

Հետևաբար, եթե մարդը հավատում է Աստծուն Հիսուս Քրիստոսի միջոցով, առ դասնում է Աստծո բարեկամ: Հովի. 15:15-ում Հիսուսն Իր աշակերտներին բարեկամներ անվանեց: Հետևաբար Աստծուն հաճելի է մարդու հետ հաղորդակցվելը, եթե մարդը հավատում է Իրեն և Հիսուսի միջոցով սկսում հաղորդակցությունը:

Երրորդ՝ Աստծուն հաճելի է, եթե մենք փառաբանում, պատվում և փառավորում ենք Իրեն մեր կյանքում: Դա տեղի է ունենում երկու ձևով՝ դավանելով և հնազանդվելով:

Աստծուն հաճելի է, եթե մենք դավանում ենք Իր անունը, կամ հայտարարում Նրա ճշմարտության մասին (Մարկ. 16:15, Ա Պետ. 3:15-16, Գործը 1:8):

Աստծուն հաճելի է, երբ մենք հնազանդվում ենք Իրեն (Մատթեոս 5:16, Հովհ. 15:14, Հովհ. 14:15, Հովհ. 14:23): Սեր հնազանդությունը փառավորում և պատվում է Նրան, ինչի արդյունքում հաճելի ենք լինում Նրան:

Արդյոք հաճելի<sup>9</sup> ենք Աստծուն, թե<sup>10</sup> ոչ: Նրա հետ հաղորդակցվելը, քրիստոնյաների հետ համախմբված լինելը, նրանց հետ խաղաղություն ունենալը և մեր կյանքով Նրա անունը փառավորելը հանգեցնում է Աստծուն հաճելի լինելուն:

Բաֆֆի Զափարյան

## Եթե Հիսուսը հիմա գար...

Եթե Հիսուսը հիմա գար և միտքս գտներ շատ գեղեցիկ խորհուրդներով ու ծրագրերով լի, որոնց մեջ ինքը որևէ բաժին չունի, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և սերս սառած գտներ իր հանդեպ, հավատքս՝ տկար և թույլ, իրեն չսպասող, անհոգ ու անտարբեր վիճակում, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և ինձ գտներ անձնասեր, ով որևէ մեկին չի պատմել իր և փրկության մասին, որի բյուրավոր օրհնությունները վայել է, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և ինձ գտներ անհաշտ, քինախնդիր հավատացյալների և մեղավորների հետ, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և ինձ գտներ անհավատարիմ, քնած, ծրագս մարած, ծառայակիցների հետ կրվող, սիրտս կերուխումով, զինովովթյամբ և աշխարհային զբաղմունքներով ծանրացած, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար, արդյոք ուրախ կլինե՞ր ինձ համար, որ արթուն եմ և Հոգով լի կյանք եմ ապրել իր շնորհով, իրեն դավանել եմ մարդկանց առջև և փառավորել խոսքով, կյանքով ու վարմունքով: Այն ժամանակ կասեր. «Լավ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ եղար, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. 25:23):

## Քրիստոնեական չափանիշներ

**Ք**րիստոնեական չափանիշները տարբեր ժամանակների և տարբեր անհատների մոտ բոլորովին տարբեր են: Մի շարք մարդկանց համար շատ էական և կարևոր են որոշ նյութեր, որոնք ուրիշների համար երկրորդական և անկարևոր են: Օրինակի համար՝ կիրակի օրը սուրբ պահելու չափանիշը բոլորովին տարբեր է շատերի համար: Կիրակի օրը զբոսանքի գնալ քաղաքում կամ ճամփորդել երկրից դուրս, երբենեկության համար դրամ ծախսել, սավրել և այլն, հաճախ վիճաբանության թեմա են եղել: Չափանիշի մեծ տարբերություն ենք տեսնում նաև Տիրոջ գործի համար տալու և տրվելու տեսակետում: Տասանորդից ավելի տալը մեկի համար անհրաժեշտ պարտավորություն է, իսկ ուրիշի համար տասանորդ տալը կատարելության բարձրագույն չափանիշ է, մյուսի համար սխալ է նկատվում Օդենքով կաշկանդված լինելը, ուստի նա տալիս է այն ժամանակ, եթե սիրտն ուզում է, երբեմն էլ ոչինչ չի տալիս:

Յուրաքանչյուր անհատ Աստվածաշնչում պատկերված օրինակներում աստվածային բացարձակ չափանիշի փոխարեն այսօր ինքն իր համար չափանիշ է որոշել ու ապրում է դրա համեմատ: Սերունդներ առաջ մարդը մի սխալ արարքը մահացու մեղք էր համարում, իսկ այսօր այն դարձել է բնական և հասարակ սովորություն նույնիսկ հավատացյալ կոչվողների շրջանակում: Շատ ցավալի է տեսնել քիստոններության չափանիշի օրեցօր անկումը: Ինչը ներելի չէր սրանից մեկ սերունդ առաջ, այսօր ներելի է դարձել ու բնական նոյնիսկ կրոնավորի համար: Շատերն իրենց խղճի հանգստությունը և քունը փախցնում են, երբ իրենց դրացուն կամ բարեկամին անախորդ փոքր բառ են ասած լինում ու զգում են այն անմիջապես ուղղելու կարիքը, մինչ մյուս կողմում կանգնած նոյնքան և ավելի հավատացյալ կոչվող մի անձնավորություն անարգում է իր ընկերոջը, դրացու հետ ամիսներով չի խոսում, իր գործավորի կամ գործատիրոջ հետ տևական կռվի մեջ է, շարունակ բամբասում է ծանոթների մասին, անարգում եկեղեցու պաշտոնյաներին, հովվին ու դարձյալ մնում է իր ջերմե-

ռանդի հավատացյալի դասակարգում. դասակարգ, որի չափանիշը շատ իջած է:

Տիրոջ սուրբ սեղանին մոտենալը պահանջում էր կատարյալ մաքրություն և սրբություն: Սուրբ հաղորդությանն արժանի համարվելու համար մանրակրկիտ ինքնաքննություն կատարողների թիվը հետրզ-հետեւ պակասում է: Եկեղեցու պատասխանատուները դուռը շատ լայն են քացել ու յուրաքանչյուր անհատի թողել են, որ իր անձի պատասխանատվությունը հանձն առնի: Ուստի հաղորդությանը մասնակցելու պայմանի չափանիշն իջել է: Աքողի և պաշտոնի մոլի թեկնածուների մտահոգությունը հաղորդական անդամների թիվը շատացնելն է միայն:

«Նպատակն արդարացնում է միջոցը» փիլիսոփայությանը հավատացող քարոզիչները և հավատացյալներն իջեցրել են քրիստոնեության չափանիշը:

- Ես եկեղեցու շահի համար սուտ եմ խոսում, եկեղեցու շահի համար կովում եմ եղբորս հետ, եկեղեցու շահի համար անարգում եմ եղբորս,
- ասում է մեկը ու արդարացնում իր բոլոր սխալ արարքները:

Հխոսան ասել է, որ լայն դրնով շատերը կարող են մտնել, քայց այն տանում է դեպի դժոխք և կործանում, քայց իրական եկեղեցու դուռը նեղ է, որ առաջնորդում է դեպի հավիտենական կյանքը: 20-րդ դարի արագահոս վայրէջքի մեջ շատացող նկարագրի, քարոյականության, արդարության սկզբունքների անկումը թող չազդի քրիստոնեական սկզբունքների վրա:

Միրելի հավատարիմ հավատացյալ եղբայր, քույր, դու մի՛ նայիր վատասերող քազմությանը, մի՛ հետևիր շուրջդ գտնվող ամբոխին, այլ կառչա՛ծ մնա Աստվածաշնչի անփոփոխ բարձր չափանիշներից, ո-րոնք հավիտենական կյանքի միակ ուղեցույցն են:

Անդրանիկ Նազարյան  
Քաղված՝ «Մարանաթա» թերթից

\* \* \*

## Գտնել հավասարակշռությունը

**Պ**րայես երեխաների և պատանիների հետ աշխատողներ պետք է գտնենք հավասարակշռությունը, հատկապես հետևյալ ոլորտներում՝ մեր հավատալիքներում, պատգամում, մեթոդներում և ծառայությունում:

Հավասարակշռության հականիշը ծայրահեղությունն է: Որևէ բանից, որը տանում է ծայրահեղության, պետք է զգուշանալ, քայլեր ձեռնարկել և գտնել հավասարակշռությունը տվյալ իրավիճակում:

### Հավասարակշռություն հավատալիքներում

Օրինակ՝ Աստծո Ամենակալ լինելը.

Երկու ծայրահեղություն

- Աստված Ամենակալ է փրկության հարցում:
- Մարդն է պատասխանատու իր փրկության համար:

Հավասարակշռություն. պետք է ավետարանել և քաջակերել երեխաներին, որ Վատահեն Տեր Հիսուսին, և նրանք պատասխանատու են դա անելու, նաև աղոքել, որ Աստված գործի նրանց սրտում և կարողություն տա նրանց՝ դա անելու:

### Հավասարակշռություն պատգամում

Օրինակ 1. Ուսուցում Աստծո սիրո և սրբության մասին:

Եթե միայն սիրո մասին շեշտենք, երեխաները կարիք չեն զգա փրկության, իսկ եթե միայն սրբության մասին շեշտենք, կհուսահատվեն: Աստծո սրբությունը մարդու փրկությունը անհրաժեշտություն է դարձնում, իսկ սերը փրկությունը հնարավոր է դարձնում:

Օրինակ 2. Երեխաների համար փրկությունը դարձնել շատ բարդ կամ շատ հեշտ:

Եթե պահանջենք, որ արցունքով ապաշխարեն, խոստանան, որ մեղք չեն գործելու, ապա սրա հակառակ տարբերակը՝ չներկայացնենք Ավետարանի պատգամը, միայն ասենք, որ Տեր Հիսուսն ուզում

է փրկել և ակնկալում է տեսնել նրա փոխված կյանքը:

Հավասարակշռություն. չպետք է այնպիսի բարձր չափանիշներ դրնենք, եթե համոզված ենք, որ երեխանները չեն կարող հասնել, պետք է օգնենք, որ նրանք աճեն Տիրոջ Խոսքին հնագանդվելու և Նրան նմանվելու մեջ:

## **Հավասարակշռություն մեթոդներում**

Օրինակ 1. Չափից շատ ճշմարտություններ աստվածաշնչան մեկ դասում, որոնցից ոչ մեկն էլ երեխան չի սովորում, կամ շատ քիչ ճշմարտություն, որն ասկում է որպես ամփոփում, իսկ երեխաններն արդեն հետքրքրված չեն լսում:

Հավասարակշռություն. պետք է պատմել դաս, որը գրավիչ է, մասնամասնորեն սովորեցնել ճշմարտություն՝ ներկայացնելով կիրառություն փրկված և չփրկված երեխայի համար:

Օրինակ 2. Ծննդում գործադրել երեխայի որոշում կայացնելու համար, կամ վերաբերել դրան շատ սառը և չկարևորելով:

Պետք է երեխաններին հրավիրենք փրկվելու քաջալերելով և ոգևորությանք, միևնույն ժամանակ զգուշանալով, որ չփորձենք անել Սուրբ Հոգու գործը:

Հավասարակշռություն. պետք է օգտագործենք հետաքրքիր մեթոդներ՝ չնոռանալով, որ ծրագրի կենտրոնը պետք է Աստծո Խոսքի ուսուցումը լինի, քանի որ հավատքը Աստծո Խոսքը լսելուց է գալիս:

## **Հավասարակշռություն ծառայությունում**

Օրինակ 1. Աշխատելու ընթացքը

- Մեկը միշտ զբաղված է, նույնիսկ առողջության հաշվին: Նրանք համոզված են, որ եթե գործի որոշակի ծրագրով, որոշակի ձեռվով, ուրեմն հաստատ արդյունք կունենա:
- Մյուսը շատ պասիվ է, քանի որ հավատում է, որ Աստված ամեն ինչ կանի:

Հավասարակշռություն. պետք է ջանասեր լինենք և նվիրված մեր գործին, միևնույն ժամանակ ապավիճնելով Աստծուն, ոչ թե ինքներս մեզ:

## Օրինակ 2. Հանգիստ

- Ակտիվ աշխատողը հաճախ աշխատամոլ է դառնում: Նա միշտ աշխատում է, հանցավոր է զգում, երբ չի աշխատում, երբ ազատ ժամանակ ունի, ծգում է որևէ բան անել, թեկուզ թերթ կարդալ հեռուստացույց դիտել:
- Մյուս ծայրահեղությունն այն է, երբ ամեն ինչ թերև ես ընդունում, առավտուները երկար ես քնում, ձգտում ես երկար ընդմիջումներ աշխատանքի ժամին:

Հավասարակշռություն. պետք է ժամանակ գտնել օրվա մեջ հանգստանալու, ծրագրել շաբաթվա մեջ ազատ օր հանգստի համար և ունենալ տարեկան արձակուրդի շրջան:

Փորձենք պահել հավասարակշռությունը մեր հավատալիքներում, պատգամում, մեթոդներում և ծառայությունում:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

## **ԵՎ ՄԵԿ ՏԱՐԻ**

### **Դուկաս 13:1-9**

**Ա**մեն տարվա ավարտը սկիզբն է մեկ այլ տարվա: Շատերի համար տարվա ավարտը կյանքի քննություն է: Այդ պահերին հիշում ենք մեր ծախողումները, դասեր քաղում դրանից ու հետո նորից մոռանում:

Սեր ծախողումների մասին հիշելիս մենք պետք է ազնիվ ու գիտակից լինենք, պետք է մտածենք, թե որքան ենք Տիրոջ համար արգասաքեր եղել:

Թզենու առակի մեջ երեք բան կա, որոնք պետք է մտապահենք: Նախնառաջ պետք է այդ առակը կիրառենք մեր քրիստոնեական կյանքում: Խաղողի այգու տերը Հայր Աստվածն է, այգեպանը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, իսկ պտղատու ծառերը մենք ենք՝ Քրիստոսի հետևորդներս:

Արդյոք մեր կյանքի գարուններին պտուղ տվե՞լ ենք Տիրոցը, թե՞ վատնել ենք մեր երիտասարդության ուկե տարիները: Արդյոք պատանի հասակում Աստծուն տվե՞լ ենք մեր անդրանիկ ու լավագույն ուժը, թե՞ բույլ ենք տվել, որ մեղքը սպառի մեզ: Միջին տարիքում մի՞թե շարունակում ենք բույլ տալ, որ աշխարհիկ արժեքները կլանեն մեր տարիները: Գո՞յցե մենք օրացույցով արդեն կես դար ապրել ենք, բայց դեռ հոգևոր մանուկներ ենք: Այս հարցերը պետք է տանք ինքներս մեզ ու անկեղծ պատասխաններ՝ քննելով մեր կյանքը:

Այսուհետև մենք պետք է հաշվի առնենք Հիսուսի խոսքերը՝ հիշելով, որ Նա Հոր՝ Աստծո առջև բարեխոսում է մեզ համար. «Տե՛ր, մեկ տարի էլ ինձ տո՛ւր, ու ես կփորեմ և պտուղ կբերեմ»:

Այստեղ տեսնո՞ւմ եք Աստծո ողորմածությունը: Որքա՞ն հաճախ է Նա մեզ հնարավորություն տվել: Մենք այս տարի պետք է համարենք Աստծո անսահման շնորհի ժամանակաշրջան: Ժամանակն Աստծուն է, և Նրա ողորմածությունն է, որ կասեցնում է «արդարության կացնի» հարվածը: Մի՞թե ուզում ենք վիրավորել Աստծո ողորմածությունը՝ այս տարի մեր ունեցած լավագույնը Նրան չտալով:

Երրորդ՝ այստեղ խոսվում է Աստծո շնորհի և համբերության սահմանների մասին: Այգեպանը խնդրել էր մեկ տարով հետաձգել: Եթե անգամ հայցողը Հիսուսն է, նույնիսկ այդ դեպում ողորմածության խնդրանքը սահմաններ ունի:

Սեղանից ոմանք ըկերներ և ընտանիքի անդամներ ունեին, որոնց համար այս տարին վերջին տարին էր: Այս առակը պետք է սրափեցնի այն քրիստոնյային, ով Տիրոջը չի տալիս իր լավագույնը: Հիմա է մեր Տիրոջ պատվիրանները պահելու ժամանակը, որովհետև չգիտենք, թե վատն ինչ է լինելու:

«Մի՛ պարծենա վաղվա օրով, որովհետև չգիտես, թե օրն ինչ կծնի» (Առակ. 27:1):

Սեր այգեպանը՝ Հիսուսը, Աստծո Սուրբ Խոսրով մշակում ու բեղմնավոր է դարձնում, ուրեմն եկեք այս տարի պտուղ տանք Նրա համար: